ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՐԱՆՍԻ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԻՐԵՐԻ ՈՒ ԾԱՆՐՈՑՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ

656
Կ-21

Նոր-Բայազետի շրջգործկոմի տպարան

1937

17 MAY 2013

656
4-21
4 V

24 SEP 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏՐԱՆՍԻ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԻՐԵՐԻ ՈՒ ԾԱՆՐՈՅՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅԱՆ

397
38

Նոր-Բայազետի շրջգործկոմի տպարան

1937

Գոս. Պետ. Գրադարան
ՀԱՅԿ-ՍՍՌ
Գ. Մասիսյան
Ս. Սեմյոնովի անվան

տարվում է տոմսերի վաճառք, ծանրոցների ընդունում տեղափոխության համար և այդպիսիների հանձնումն ուղեվորներին։

3. Արգելվում է Հայաստանի ավտո-կայաններին փոխադրել ուղեվորներ ու ծանրոցներ հետևյալ դեպքերում՝

ա) Յերբ ուղեվորների իրերի ու ծանրոցների փոխադրությունը չի կարելի իրականացնել բնության անհաղթելի յերևույթների հետևանքով, կամ ճանապարհա-հաղորդակցության բացակայության դեպքում։

բ) Յերբ ուղեվորը գտնվում է հարբած դրության մեջ կամ թե այնպիսի հիվանդ դրության մեջ, վորից կարող է մյուս ուղեվորներին ցաս սպառնալ կամ խանգարել նրանց հանգիստը (վարակիչ հիվանդություններ, հոգեկան հիվանդություններ, ընկնավորներ)։

գ) Յերբ ուղեվորը ունի իր հետ կենդանիներ կամ թռչուններ։

դ) Յերբ ավտոբուսի մեջ ուղեվորի հետ վերցրած ծանրոցի քաշը 5 (հինգ) կիլոգրամից ավել է կամ թե ծանրոցը, վորի քաշը թեպետ 5 կիլոգրամից ավել չէ, բայց իր ծավալով մեծ է և կարող է խանգարել մյուս ուղեվորներին։

4. Այն դեպքում, յերբ Հայաստանը բաց է անում նոր ավտո-ուղեվորային գծեր, համապատասխան քաղաքներն այդ գծերի գործունեության մասին պարտավոր են հաղորդել ռադիոյի միջոցով, տալ թերթերում համապատասխան հայտարարություններ, հաղորդել համապատասխան գյուղխորհուրդներին, միաժամանակ փակցնել բոլոր ավտո-կայաններում հայտարարություններ ցույց տալով բացված գծի մարշրուտը, կանգ առման կայանները, մեքենաների մեկնման ժամացույցը և տոմսի արժեքը։

2. ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Բոլոր ուղեվորները պարտավոր են ձեռք բերել ավտո-յերթևեկության համար տոմս, այդպիսին պահել մինչև ուղեվորության վերջնական կայանը և ներկայացնել Հայաստանի հսկիչներին նրանց առաջին պահանջով։

Տոմսը գնելու ժամանակ ուղեվորը պարտավոր է վճարել տոմսի արժեքը և նրա հետ կապված բոլոր լրացուցիչ ծախսերը (ապահովագրման և ուրիշ)։

6. Ամեն մի ուղեվորի թույլատրվում է վերցնել իր հետ անվճար մի յերեխա մինչև 5 (հինգ) տարեկան հասակում, առանց զբաղեցնելու մեքենայում յերեխայի համար առանձին տեղ։

5—10 տարեկան յերեխաները, վորոնք մեկ-

նում են հասակավոր ուղեվորների հետ, փոխադրվում են 50% զեղչով հատկացնելով նրանց համար տեղ։

7. Ամեն մի ուղեվորի թույլատրվում է վերցնել իր հետ ձեռքի ծանրոց մինչև 5 (հինգ) կիլոգրամ, բայց մեծ ծավալ ունեցող իրերն ու ծանրոցները, որոնք կարող են փչացնել մեքենայի գույքը, կամ թե ստեղծել մյուս ուղեվորների համար անհարմարություններ, չի թույլատրվում վերցնել մեքենայի մեջ և այդպիսիները պետք է հանձնվեն փոխադրության, վճարելով փոխադրավարձը։

8. Ավտո-մեքենայի մեջ հայտնաբերված առանց տոմսի ուղեվորը, ՀԽՍՀ ԺԿՆ-ի 1937 թ. ապրիլի 28—29-ի № 9 վորոշման հիման վրա տուգանվում է տոմսի արժեքի յեռապատիկ չափով։

9. Զվացուցակով մեկնվող մեքենայի մեկնման ժամկետից ուշացող ուղեվորը կորցնում է ձեռք բերած տոմսով մեկնման իրավունքը։ այդպիսի դեպքում տոմսի արժեքը հետ չի վերադարձվում։

10. Այն դեպքում, յերբ տոմսում նշանակված հերթին մեկնվող մեքենայով հնարավոր չէ մեկնել, ուղեվորին իրավունք է վերապահվում մեկնումը հետաձգել, կամ վերադարձնել տոմսն ստանալու նրա արժեքը։

Ծանոթություն.— 1) Մեքենայի մեկնման ժամկետի հետաձգումը, կամ տոմսի վերադարձումը կատարվում է տվյալ կայարանապետի միջոցով, նրա գնման կայանում նախորոք, կամ տոմսում նշված մեքենայի մեկնման ժամկետից 2 ժամ առաջ։

2) Տոմսը վերադարձնելիս, կազմվում է համապատասխան արձանագրություն և ուղեվորից պահվում է տոմսի մարման համար նրա արժեքի 10 տոկոսը։

3) Տոմսով սահմանված մեկնման ժամկետը կարելի յե հետաձգել միմիայն մեկ անգամ, այն ել նրա գնման կայանում։

11. Ուղեվորի փոխադրումից կամ նրա ծանրոցի տեղափոխելուց հրաժարվելու դեպքում, յեթե այդպիսին կապված չէ յերթի փոփոխման կամ ավտոմեքենայում ազատ տեղ չլինելու հետ, կայարանապետն ուղեվորի պահանջի հիման վրա պարտավոր է տալ տեղեկանք, ցույց տալով հրաժարման պատճառները։

12. Հայարանների բոլոր կենտրոնական և գծային կայարաններում պետք է լինեն բողոքի գրքեր, բնակչության և ուղեվորների բողոքները հայտնելու համար։

Ծանոթություն.— Բողոքների վերանայման կանոնը սահմանվում է Հայտարանի հատուկ հրահանգով։

3. ԾԱՆՐՈՑՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. Ուղեվորային ծանրոց հասկացվում է՝ յերթեվեկության համար տոմս ունեցող ուղեվորին պատկանող կապոցներ, պայուսակներ, զանբյուղներ և այլն իրեր, վորոնք տեղափոխվում են համաձայն հաստատված տարիֆի, ուղեվորի մեկնման մեքենայով կամ հատուկ սարքավորված ապրանքատար ավտոմեքենայով։

Այն դեպքում, յերբ ուղեվորը չի ներկայացնում ուղեվորության համար գնած տոմս, նրա ներկայացրած ծանրոցը կամ ծանրոց, վորը կապված է վորպես ապրանք (արկղներ, տակառներ և այլն) համարվում են վորպես ապրանքային ծանրոց, վորոնք թույլատրվում են փոխադրության միմիայն ապրանքատար մեքենաներով, այն էլ ըստ հնարավորության սահմաններում։

Ծանոթություն.— Այդ ապրանքների փոխադրության ընդունման հնարավորությունը վորոշում է կայարանապետը։

14. Ուղեվորային ծանրոցի առանձին տեղերը, վորոնք փոխադրվում են մարդատար մեքենաներով, չպետք է լինեն 16 կիլոյից ավել։

Ապրանքատար մեքենաներով փոխադրվող ծանրոցի ամեն մի տեղի քաշը սահմանվում է 80 կիլոգրամ, իսկ ծանրոցի ընդհանուր քաշը մի ուղեվորի համար սահմանվում է 160 կիլոգրամ։

Ծանոթություն.— մեքենաների գույքն ու նստարանները չփչացնելու համար, մարդատար ավտոմեքենայով տեղափոխվող ծանրոցը պետք է լինի կապված փոփուկ տարայի մեջ կամ փաթաթված քաթանով։

15. Բոլոր քաղաքացիներն իրենց անփութության և անզգուշության հետևանքով Հայտարանի մեքենաներին և գույքին հասցրած ջնասի համար պատասխանատու են նրանց պատճառած ջնասի չափով, վորը գնահատվում է կայարանապետի կողմից և գանձվում է տեղում։

Ծանոթություն.— 1) Այն դեպքում, յերբ ուղեվորը հրաժարվում է վճարել գույքին պատճառած ջնասը, տվյալ կայարանում կազմվում է համապատասխան արձանագրություն, վարչական կարգով բռնագանձելու համար։

2) Արձանագրության մեջ ցույց է տրվում հանցավորի անուն ազգանունը,

հայրանունը, հասցեն (համաձայն ներկայացրած փաստաթղթերի), փչացրած գույքը և նրա արժեքը։

Արձանագրությունն ստորագրում են կայարանապետը, հանցավորը և յերկու վկաներ (ցույց տալ վկաների հասցեն)։

16. Այն դեպքում, յերբ ծանրոցը կապված է վոչ բավարար կերպով, վորի հետեվանքով նրա միջի ապրանքի կորուստը կամ փչացումը լինում է հնարավոր, այդպիսին չի ընդունվում փոխադրման։ Այդ դեպքում նրա ընդունումից հրաժարվելը համաձայն ուղեվորի պահանջի, պետք է արձանագրվի։

17. Արգելվում է փոխադրել ծանրոցի անվան տակ կենդանիներ, թռչուններ, մեծ ծավալ ունեցող իրեր, պայթուցիկ, բռնկվող և գարշահոտ նյութեր ու առարկաներ, վորոնք կարող են վնաս հասցնել ուղեվորներին, նրանց իրերին, մեքենային ու նրա գույքին։

18. Ծանրոցի անվան տակ տեղափոխման արգելված նյութեր ու առարկաներ ուղեվորների մոտ ավտո-մեքենայում հայտնաբերված դեպքում հանցավորը տուգանվում է համաձայն ՀԽՍՀ ԺԿԽ 1937 թվի ապրիլի 28—29-ի № 9 վորոշումով։

19. Ծանրոցների ընդունման ժամերն ու

պայմանները վորոշվում են տվյալ կայարանի բաղայի պետի կողմից նախորոք համաձայնեցնելով Հայաստանի Տրեստի դիրեկտորի հետ, վորը հաստատելուց հետո փակցվում է ավտո-կայանների դրամարկղերի մոտ և ծանրոցների ընդունման կայանում։

20. Ընդունված ծանրոցը Հայաստանը պարտավոր է տեղափոխել 48 ժամվա ընթացքում (չհաշվելով նրա ընդունված որը), հակառակ դեպքում ամեն մի ուշացած որվա համար վճարում է տուգանք, ըստ անդորրագրի որական 5 ռուբլի։

21. Այն դեպքում, յերբ ծանրոցը նրա հասցեագրված կայարան է հասնում սահմանված ժամկետից ուշ, տվյալ կայարանում կազմվում է արձանագրություն, ցույց տալով ծանրոցի անդորրագրի №-ը, նրա ուղարկող կայանը, տեղափոխող մեքենայի №-ը և ծանրոցը տեղափոխության համար ընդունած որը։

Ծանոթություն. 1) Ծանրոցի ուշացումի համար սահմանված տուգանքի վճարումը կատարվում է նրա հասցեագրված կայանում, համապատասխան արձանագրությամբ, վորտեղ ցույց է տրված ուղեվորի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն (համաձայն ներկայացրած փաստաթղթերի) ծանրոցի անդորրագրի №-ը և ընդունման կայանը։

2) Ծանրոցի ուշացման համար սահմանված տուգանքից Հայտրանան ազատվում է, եթե այդ ուշացումը կապված է մեքենաների մոբիլիզացիայի հետեվանքով կամ ճանապարհաղորդակցության բացակայության պատճառով։

22. Տեղափոխության ընդունված ծանրոցները պետք է անպայման կշռվեն, ծանրոցի անդորրագրում նրա քաշը կլորացվում է մինչև մի կիլոգրամը.

ա) դեպի ավելացումը եթե քաշը գերազանցում է 0.5 կիլոգրամից.

բ) դեպի պակասացումը եթե քաշը չի հասնում 0 5 կիլոգրամի։

Ծանոթություն. Այն դեպքում, երբ ծանրոցի ընդունման տեղում կշեռք չի լինում (որինակի համար ճանապարհին վերցված ծանրոցները) ծանրոցը կշռվում է մոտակա ավտո-կայանում և գանձվում է նրա փոխադրավարձը։

23. Ուղեվորային ծանրոցի ընդունումը հաստատելու նկատառումով, Հայտրանսի ավտոկայանները տալիս են ուղեվորին ներկայացման ծանրոցային անդորրագիր, իսկ ապրանքային ծանրոցներ ընդունվելու դեպքում, տրվում է անվանական ծանրոցային անդորրագիր։

Ծանոթություն. 1) Ծանրոցային անդորրագիրը կազմված է յերեք մասից՝ ծանրոցային անդորրագրից, ճանապարհային ծանրոցային տեղեկանքից և կտրոնից։

2) Ծանրոցային անդորրագիրը հանձնվում է ուղեվորին, ճանապարհային ծանրոցային տեղեկագիրը հետեվում է ծանրոցին, իսկ կտրոնը մնում է ավտոկայանում։

Ուղեվորային ծանրոցը հանձնվում է ծանրոցային անդորրագիր ներկայացնողին ապրանքային ծանրոցն ստանալու համար, բացի ներկայացման անդորրագրից, ստացողը պարտավոր է ներկայացնել իր անձնագիրը, իսկ եթե ապրանքային ծանրոցը հասցեագրված է կազմակերպության կամ պետհիմնարկներին, բացի վերոհիշյալից նաև լիազորագիր ծանրոցը պատկանող հիմնարկ-ձեռնարկի կողմից։

Ծանոթություն. Ծանրոցը հանձնման ժամանակ, ծանրոցի անդորրագիրը և լիազորագիրը մնում են ծանրոցը հանձնող ավտո-կայանում։

24. Ծանրոցի անդորրագիրը կորցնելու դեպքում, նրա տերը պարտավոր է այդ մասին ներկայացնել դիմում, նշելով ծանրոցի կտոր-

ների քանակը և նրանց միջև բովանդակությունը։

Համապատասխան ծանրոցի հանձնումը կատարվում է այդպիսինի պատկանելիքը պարզելուց հետո. ծանրոցի պատկանելիքը հաստատելու դեպքում, նրա ստացողից վերցվում է ստորագրություն, որի մեջ նշվում է ստացած ծանրոցի բոլոր նշանները, ստացողի անուն-ազգանունը, հայրանունը և նրա մշտական բնակման հասցեն (համաձայն ներկայացրած փաստաթղթերի)։

Ծանրոցային անդորրագիրը կորցնելու դեպքում, ծանրոցի հանձնումը կատարվում է նրա հանձնող կայարանապետի թույլտվությամբ։

25. Ուղեվորներին իրավունք է վերապահվում հանձնված ծանրոցը գնահատել։

Ծանրոցի գնահատության համար, ուղեվորից գանձվում է գնահատության համար հատուցված վարձ։

26. Ծանրոցի ճիշտ գնահատությունը կատարելու դեպքում, ծանրոցի ընդունողին իրավունք է վերապահվում պահանջել ուղեվորից բաց անել ծանրոցը նրա ճիշտ գնահատության մեջ համոզվելու համար։ Տարաձայնության դեպքում, ծանրոցն ընդունվում է տեղափոխության, գնահատելով այդպիսին կայարանապետի կողմից սահմանված գումարով։

27. Ծանրոցների տեղափոխավարձը գանձվում է նրա ընդունման կայանում, համաձայն հաստատված տարիֆի։

Բացի ծանրոցի տեղափոխավարձից ուղեվորից գանձվում է նաև բոլոր լրացուցիչ ծախսերը՝ ապահովագրման գանձում, բանվորական ուժի վարձ, գնահատավարձ և այլն։

28. Չպահանջված ծանրոցը նրա հասցեագրված կայանում պահվում է 30 որ, որից հետո այդպիսին համաձայն չպահանջված իրերի ու ծանրոցների լուծարքման կանոնադրության լուծարքվում է։

29. Մեկ որից ավել պահված ծանրոցի համար նրա յուղած որից հետո, գանձվում է համապատասխան չափով սահմանված պահպանման վարձ։

4. ՁԵՌՔԻ ԾԱՆՐՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

30. Մանր իրերի ու ձեռքի ծանրոցների կարճատև պահպանումը (հովանոցներ, փոքրիկ պայուսակներ, կապոցներ, զամբյուղներ և այլն) կատարվում է Հայաստանի այն ավտոկայարաններում, որտեղ կազմակերպված է ձեռքի ծանրոցների պահպանման կամերաներ։

31. Ձեռքի ծանրոցների և իրերի պահպանման ընդունման դեպքում, հանձնողին հանձնվում է համապատասխան անդորրագիր։ Ծան-

ցոցները տիրոջը հանձնելու ժամանակ, ներկայացրած անդորրագիրը վերցվում է և պահվում ծանրոցի կամերայում, միացնելով նրա կարանի հետ։

32. Բոլոր ուղեվորներին իրավունք է վերապահվում պահպանման հանձնվող ծանրոցները գնահատել։ Ծանրոցի գնահատության համար ուղեվորից գանձվում է գնահատության համար սահմանված վարձ։

Ծանոթություն.— Ծանրոցի ճիշտ գնահատությունը կասկածելու դեպքում ղեկավարվել սույն կանոնադրության 26-րդ կետով։

33. Բռնկվող, պայթող և գարշահոտ նյութերը, նույնպես և նյութեր ու առարկաներ, վորոնք կարող են փչացնել ծանրոցային կամերայում յեղած իրերն ու ծանրոցները պահպանման չի ընդունվում, չի ընդունվում նաև կենդանիներ ու թռչուններ։

34. Այն դեպքում, յերբ հաճախորդի հանձնված իրերում կամ ծանրոցներում կհայտնաբերվեն պահպանման համար արգելված առարկաներ ու նյութեր, հանցավորը կտուգանվի ՀԽՄՀ ԺԿԿ 1937 թվի ապրիլի 28—29-ի № 9 վորոշման հիման վրա։

35. Ձեռքի ծանրոցների և իրերի պահ-

պանման համար գանձվում է համապատասխան վարձ, ըստ տեղի ու պահպանման որի։ Պահպանման համար սահմանված գումարի գանձումը կատարվում է այդպիսին հանձնելու ժամանակ և վոչ լրիվ որը հաշվվում է լրիվ որ։

36. Ձեռքի ծանրոցները և առարկաները ծանրոցային պահպանման կամերայում պահվում են 15 որ, վորից հետո լուծարքի յենթարկվում համաձայն չպահանջված ծանրոցների ու իրերի լուծարքման կանոնադրությանը։

5. ՀԱՅՏՐԱՆՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

37. Հայտրանսը պատասխանատու է ուղեվորների առաջ նրանց հասցրած անձնական վնասի համար, համաձայն քաղաքացիական օրենսդրության։

38. Այն դեպքում, յերբ ծանրոցի քաշից պակասում է նրա տեղերի քանակի լրիվ ներկայության դեպքում, նույնպես և ծանրոցի փչացման դեպքում, Հայտրանսի ավտոկայարանապետները պարտավոր են նրաց ստացողի պահանջի հիման վրա կազմել արձանագրություն, ցույց տալով ինչպես տարայի ու կապոցի արտաքին դրության մասին, նույնպես և նրա միջի բովանդակության մասին։ Ծանրոցի փոցրված դեպքում կամ նրա առանձին տեղե-

ի բացակայության դեպքում, Հայտարանի ավտո-կայարանապետերը պարտավոր են առանց ապասելու հաճախորդի պահանջին, կազմել այդ մասին արձանագրություն, հնարավորության սահմաններում ցույց տալով կորցրած ծանրոցի կամ իրի արժեքը։

39. Այն դեպքում, յերբ պահանջված ծանրոցը 7 որվա ընթացքում չի կարելի հանձնել տիրոջը, հաշվելով մեքենայի յեկած որը, վորով այդ ծանրոցը պետք է դար և այն դեպքում, յերբ ծանրոցի հասցեագրած կայարանում այդ ծանրոցի մասին չկա տեղեկություն, վոր տրվյալ ծանրոցը մնացել է մի վորևէ կայարանում, ուղեվորն իրավունք ունի համարել իր ծանրոցը Հայտարանի հանցանքով կորած, և ստանալ վերջինից կորցրած ծանրոցի հատուցումը։

Կորցրած ծանրոցի հատուցման դեպքում, յերբ ուղեվորն ստանում է դրամական հատուցում, տված ստացականում կարող է ավելացնել, վոր ինքը համաձայն է իր ծանրոցը գտնվելու դեպքում, վերադարձնել դրամական հատուցումը և ստանալ իր ծանրոցը։

Ծանոթություն.— Դրամական հատուցման ժամանակ ստացողից ստացվող ստացականում ցույց է տրվում կորած ծանրոցի քաշը, քանակը, նրա անդորրագրի

համարը, ստացողի անուն ազգանունը, հայրանունը և հասցեն (համաձայն ներկայացրած փաստաթղթերի)։

Այն դեպքում, յերբ կորած ծանրոցը հայտնաբերվում է, Հայտարանի համապատասխան ավտո-կայարանները պարտավոր են այդ մասին հայտնել նրա ստացողին, յերբ ուղարկված տեղեկագրին հասցեատուն 15 որվա ընթացքում չի պատասխանում, հայտնաբերված ծանրոցը լուծարքվում է սույն կանոնադրության 28-րդ կետով։

40. Հայտարանը տանում է նյութական պատասխանատվություն ուղեվորներից տեղափոխության և պահպանման համար ընդունված ծանրոցների ու իրերի պակասորդի և փչացման համար, յեթե չկարողանա ապացուցել, վոր պակասորդը կամ փչացումը չի առաջացել անհաղթելի յերևույթների հետևանքով կամ ծանրոցի հատկության պատճառով։

Հայտարանի պատասխանատվությունը վորոշվում է հետևյալ չափերով.

ա) գնահատված ծանրոցի կորցրած դեպքում, նրա գնահատության չափով.

բ) վոչ գնահատված ծանրոցի կորցրած դեպքում նրա իսկական արժեքի չափով (բայց վոչ ավել ամեն մի կիլոգրամի համար 5 ռ.).

4092

գ) ծանրոցի փչացման դեպքում, նրա իսկական ֆնասի չափով, բայց վոչ ավելի քան կորցրած ծանրոցի համար սահմանված չափով։

դ) այն դեպքում, յերբ գնահատված ծանրոցի քաշում հայտնաբերվել է պակասորդ (առանց տեղերի պակասորդի) և յերբ ապացուցված է, վոր պակասորդը հետեվանք է ծանրոցի մասնակի կորուստի, Հայտարանը վճարում է հատուցում, հայտարարված գումարով համաչափորեն ըստ գնահատության և պակասած քաշի, իսկ գնահատության բացակայության դեպքում՝ իսկական ֆնասի չափով (բայց վոչ ավել 5 ռուբլուց ամեն մի կիլոգրամի համար)։

41. Ուղեվորների հետ վերցրած և նրանց հսկողության տակ գտնվող ծանրոցի համար Հայտարանը վոչ մի պատասխանատվություն չի կրում։

24. 113